

— Առէք, ասում ա՛ր սփիւրք. ձեզ ըս օր մի թաղոյ ընկեր էլ եմ բերէ:

Աղքատը էլ եգ բրդղները դնում ա տախտի տակը՝ ինքն էլ պառկում քնում: Հարուստը էլ վախտ չի կորցնում — տախտի տակիցը ուսուլով չորս բրդուղն էլ վեր ա ունում, գուռը բաց անում ու ծլիւում:

Աւաւստը որ լիտանում ա թէ չէ՛, աղքատը էլի գուս ա գալի աղքատութիւն անելու: Աաղ օրը ինչ որ հաւաքում ա՛ հաւաքում, իրիկունը էլ եգ տաւն ա գալի, Տախտի տակիցը ուզում ա փողի բղղները հանի, որ հաւաքած փողերը իրանց տեղերն ածի՛ մնում ա սառած, որ տենում ա սնչ փող կայ, սնչ դադ: Շատ ա գլխին տալի, լաց ըլնում՝ համայ ձեռը զագ չի ընկնում:

Մի օր էլ էս աղքատը բազարի դրանը ոգորմութիւն էր կիտում: Էն սրա փող տանող հարուստ մարդը տեսաւ թէ չէ՛, ճանանչեց, կանչեց տարաւ աշղաժխանէն, իրա փողովը կերակուր ածիլ տուեց նրա հմար, տուեց ուտի:

Աղքատը ինչքամ զօրում էր՝ կերակուրը բողաղովը կուլ չէր էթում: Աղքատը ինքն իրան միտք արեց. «բալի՛, էս իմ փողն ա՛, որ կուլ չի էթում. կայ՛, չկայ՛ էս մարդն ա փողերս գողացէ՛», էթում ա գուղ էն հարստի ետխէն զայլմ՝ բռնում:

— Ա՛ղպէր, ասում ա. իմ փողերը դո՛ւ ես գողացէ՛ տո՛ւ:

— Զա՛նըմ, գե՛ծղըմ, ասում ա հարուստը. ես քեզ լուսութիւն արի, որ դու նրա տեղակ ինձ վրա դեռ շառ էլ գցե՛ս:

Աղքատը կռիւ, զալմազալ. — չէ՛, իմ փողերը դո՛ւ ես տարէ, որ դու ես տարէ, Հարստին քաշ տալօն՝ տանում ա թագաւորի կուշտը: Թագաւորը հարցնում ա.

— Բա՛բի, ի՞նչ ես ուզում:

— Թագաւորն ապրած կենայ, էս մարդը փողերս գողացել ա, չի տալի:

— Ա՛րգիան գլտաս, որ սա՛ ա գողացէ՛, հարցնում ա թագաւորը:

— Զու՛նքի ես իմ փողովը որ զագ ի աւնում՝ ըսկի բողաղովս կուլ չէր էթում: Հմի էս մարդը բազարումը ինձ կերակրի դո՛նաղ արեց՛, չկարացի ուտի — կուլ չգնաց. էրեւում ա որ գողացած փողերս էս մարդի կշալն ա:

— Թէ որ քու փոքր քեզ կուլ չի էթում, ասում ա թագաւորը. բան էլ քու ընչին ա պէտք. հաղիր թող նա բանայնի ում կուլ ա էթում: Կնա՛ բարի, գնա՛ բանիդ. քու փոքր է մարդին իրա մօր ծծի կաթի նման հալալ ա: Ասում ա թագաւորը ու ջուղաբ անում:

### Անբեգեայ Դէր:

Կընի չիլնի մի մարդ մի կնիկ: Սրանք ունենում են մի աղայ՝ մի աղջիկ. — համայ մէրը խորթ ա ընում, հէրը հալալ: Խորթ մէրը էս էրկու էրեխէքանցը ըսկի օր չէր տալի: Մի հետ էլ մարդի եախէն ա կոնում:

— Այ մարդ, ասում ա. թէ ուզում ես որ ես քու կնիկն ընեմ ու քեզ աչքիս լսի պէս սիրեմ՝ էս քու էրեխէքանցդ սնց ընի ես պտի մորթես, ես թէ չէ տանես մի գհով կորցնես, որ աչքս չտենայ գրանց: Թէ չէ իմաց կաց, ես գլուխ վեր կունեմ կէթամ:

Խեղճ հէրը չէր իմանում ի՞նչ անի, որ ջուրն ընկնի որ կնկայ ձեռիցը պրծնի: — ձար չկար. եզի վերջը էլ պտի նրա ասածն անէր:

Մի օր, աղին կանչում ա, ասում ա — արի գլուխդ վեր անեմ ու բիրդան արծլով տալի՛ շլինքը թռցնում: Մէրը աղի միար էփում ա ու ինքը մէն մէնակ ուտում, անուշ անում՝ մնացածն էլ քվօր հմար պահում: Քիրը իրեկունը տուն ա գալի, մօրից հայ ուզում:

— Ա՛ղի, սո՛ված եմ. ըսկի ի՞նչ կայ ուտելու: Մէրը թօնթորալէն ասում ա.

— Մահէն դուռում ուտես դու. գնա հրէն սալի միջին մի քանի թիքայ միս կայ՝ վէ կալ, կէ:

Խեղճ քիրը գնաց, ի՛նչ տենայ — իրա աղպօր ձեռները նստեց ընդէ մի կուշտ լաց էլաւ. համայ լաց ընելօն ի՞նչ պտի անէր, բանը բանից անց էր կացէ: Աղպօր ձեռները վէ կալաւ ու գընդ գուս: Գժուածի նման քուչայ քուչայ ընկած՝ ման էր գալի: Վերջը սրան մի մօլլայ աատ էկաւ, հարցրեց — իսի՞ ես լաց ընում: Քիրը նազէ արեց, ի՞նչ որ գլխովը անց էր կացէ:

— Բան չկայ, որդի, ասեց մօլլէն. մի լաց ընի. եգ ձեռները տար դի մի պատի ճղակ՝ վրէն ջուր ածա՛ — աղպէրդ էլ եգ կըտաղանայ:

Քիրը ըսենց էլ անում ա — վեր ա ունում տանում մի պատի ճղակում ֆորում, վրէն ջուր ածում թէ չէ՝ էն սհաթը ազպէ-րը սազանում ա, ծիա ընում՝ թռնում: Էս ծիան ա. թռնում ա էթում, գուքանէ գուքան ման գալի՝ հետը ասում.

« Ծիաիկ եմ, ծիլիլիկ եմ,

« Հօր մորթած եմ,

« Մօր կերած եմ,

« Անուշ քօր լացած եմ: »

Մըր մի թօփ ասեղ ա տալի, որը մի թօփ քորոց, որը մի բազ-գազի աղուխ. — մախլաս սիլ ինչ ուղում ա: Ըսենց հաւաքելօն՝ թռնում ա էթում իրանց երգիկի գլխին նստում. ասում ա.

— Հէրիկ, մէրիկ. մի վեր մտիկ անէք.

Հէնց որ հէրն ու մէրը գպա երթիկն են մտիկ անում թէ չէ՝ ազէն ամէն մէկի աչքը մի մի թօփ ասեղ ա գցում — աչքները քօռացնում: Եննայ քիօրն ա ձէն տալի.

— Քնէրիկ, քնէրիկ. մի վեր մտիկ անէն:

Քիրը գլուխը բանձրացնում ա թէ չէ՝ մի բազգազի աղուխ էլ նրա գլխին ա գցում:

### Իրէ՛ Աղաղակ:

Արնի չիլնի մի թագաւոր: Էս թագաւորի երկրումը մի գիժ կնիկ կար՝ ունէր իրեք տղայ. — նրանցից մինը սրբաբար էր, մի-նը՝ կատեպան, մէկելը՝ ջուհլակ: Մի տարի էս թագաւորի եր-կիրը սով ընկաւ. սով, էն թախուր սով, որ իմ միս կարողին ուտա չ'գայ. — մի կտոր հացի հմար հազար գլուխ ին ջարդում՝ ըն էլ ձեռ չէր ընկնում: Մի օր, չեմ գիտայ սնց էլաւ, թագա-ւորի ուղար կորաւ. էս գիժ կնկայ տղէքը տեհան թէ չէ՝ բռ-նեցին տարան տուն: Քիտային որ իրանց մէրը գիժ ա, կէթայ թագաւորին խաբար կրայ՝ բերին նրան հարսի շորեր հագ-ցըրին, լաչակ գձեցին երեսին, տարան տան պուճախումը կան-նացրին:

— Նանի, ասեցին. քեզ պտի թագազան պսակենք. էս ուզան էլ՝ քու հարսանքի ուզան ա, մորթում ենք, որ հարսանքաւորի հմար կերակուր էփենք:

Երեք աղաբտինքը ուղար մորթեցին, քերթեցին. միսը զաւուր-մայ արին, լցրին սքաշները՝ տարան թաքուն ասեղ պահեցին, որ

չգտնեն՝ բալի ման ին գալի. թէ չէ նրանք տնով, տեղով Սիրի-  
րական ին: Եննայ ամէն մարդ գնաց իրա բանին:

Թագաւորը իրա նօքարներին զրկեց, որ էթան կորած ուղտին  
ման գան: Նօքարները շատ դէս ընկան, դէն ընկան՝ չգտան:  
Վերջը եկան որ էս գիժ կնկայ տղէքանցը հարցնեն: Աղաք ուր-  
պար աղպօր կուշտը գնացին, որ հանգումը վար ու ցանք էր ա-  
նում: Թագաւորի նօքարները հարցրին.

— Ա՛ղպէր, ըստերանք ուղտ հօ չե՞ս տեհէ:

— Չէք տենում, որ վար եմ անում: Սա իրան ընենց էր  
շանց տալի, սաքի թէ գիժա:

— Մենք քեզ հարցնում ենք՝ ուղտ չես տեհէ, դու ասում  
ես՝ վար եմ անում: Եգ հօ մընք էլ ենք տենում. թէ բան գի-  
տաս՝ ասա:

— Չէ, ընենց օրա ընում, որ մի օրավար ենք վարում. ընենց  
օրա ընում՝ էրկու օրավար:

— Ա՛ւղտ ենք ասում, ո՛ւղտ՝ չորս ոննանի, էրկու անկաջանի,  
շինքը ծուռը:

— Էս հլա վարում ենք. վարից ետը պտի ցանկնք, բեջարենք,  
վախտին ջրենք, որ մասիլը չչորանայ:

Թագաւորի նօքարները իրար մէջ ասեցին. « աղպէր, սա գիժ  
ա, սրանից բան չենք հասկանայ. էթանք էն մէկել աղպօր կուշ-  
տը, բալի մեզ մի դրուստ ջուղար տայ. » Գնացին կատեպան աղ-  
պօր կուշտը, տեհան պօպօք ա թափ տալի. հարցրին.

— Ա՛ղպէր. թագաւորի ուղտը կօրել ա, բալքի տեհած ընես:

— Քօն էք ինչ ա. չէք տենում, որ պօպօք եմ թափ տալի:  
Սա էլ իրան ընենց շանց տուեց, սաքի թէ գիժա:

— Թագաւորի ո՛ւղտն ենք ասում, թագաւորի ո՛ւղտը. տեհել  
ես՝ ասա տեհել եմ, թէ չէ՝ պրծանք գնաց:

— Ընենց տարի ա ընում, որ պօպօքի հարիլը մի մանէթով  
ենք ծախում: Ընենց տարի էլ ա ընում, որ հարիլը էրկու մա-  
նէթով ա էթում. — տալին գիտայ:

— Ա՛ւղտ ենք անում, ո՛ւղտ. քան էս ինչ ա:

— Էս հլա գեռ պուճուր ծառն ա. մենծ ծառը յիջու գլխին ա.  
էն եննայ պտի թափ տանք:

Նօքարները իրանց իրանց միտք արին, թէ սա նրանից դհա  
գիժ ա. էթան սրանց տունը, մէկել աղպօրը հարցնեն. բալքի

նա՛ թագաւորի ուղտիցը խաբարութիւն ունենայ: Գնացին ջուհիակ աղպօր կուշար՝ հարցրին:

— Թագաւորի ուղտը կօրել ա՛յ աղպէր: Հօ չե՛ս տեսէ, քեզ մուշտուլուղ կ'տանք:

— Այ քնե՛րդ լա՛ւ բաց արէք, լա՛ւ: չէ՞ք տեսում ինչ ա՛յ որ կըտաւ եմ գործում: Սա՛ էլ մէկել աղպօրտանց պէս՝ իրան գիժ շանց տուեց:

— Քեզ ս՛ւղա ենք հարցնում, դու ասում ես՝ ֆլան չի բէհման ա:

— Հա՛ ընենց օր ա ըլնում՝ մի թօփ եմ գործում: Ընենց օր ա ըլնում՝ կէս թօփ էլ ա չեմ կարում գործի: — վախտը գիտայ:

— Գիժ հօ չե՛ս, այ աղպէր: մենք քեզ թագաւորի ուղտն ենք հարցնում՝ դու կտաւիդ վրա ես խօսում:

— Էժան՝ վախտը կտաւի թօփը վեց արասի ա՛յ թանգ վախտը ութ արասի, ես՝ էրկու մանէթ:

Թագաւորի նօքարները ասեցին. — աղպէր, սա է՛ն էրկու աղպօրից էլ գիժ ա էրեւում: Էթանք սրանց մօրը հարցնենք, բաւքի նա՛ մեզ գրուստ ջուղաբ տայ: Գնացին սրանց գիժ մօրը հարցրին, թէ թագաւորի ուղտը հօ չի՞ տեսէ:

— Ո՛նց չէ՛, ասեց. տեսել եմ. իմ տղէքը բերին մարթեցին, զաւուրմայ արին՝ հրէնիկ աքաջներում պահել են:

— Էդ ե՛ր:

— Եր որ ես թագայ հարս ի, ինձ նո՛ր պտի պսակէին:

Թագաւորի նօքարները տեսան, որ էս կնիկը նրանցից գիժ ա՛ թողին գնացին թագաւորին իմաց տուին, թէ մեռան ման գալօն՝ ուղտը չկարացին գտնի: ✕

#### Մօլայի հեռալը:

Ըլնում ա չիլնում աւալ ժամանակին մի մարդ մի կնիկ սրանք ըսկի պտուղ (որդի) չեն ունենում: Էս խեղճերը մեռան սրբերի գուռը էթալօն, մատաղ անելօն, ոգորմութիւն տալօն՝ չէ՛, չէլաւ. Աստօծ սրանց պտուղ չտուեց:

Անց կացաւ ըսենց հինգ տարի, տասը տարի, քսան տարի. վերջը մարդը միտք արեց՝ իրանց դրան աղաքին մի խօր ֆօր փօրիլ տայ, երեսըհանց ընենց ֆողով ծածկի, որ մալում չանի: Ասեց — ս՛ղ կգայ մի զաֆիլ էս ֆօրի մէջը կընկնի՝ հէնց նրա՛ ետխէն

դայիմ՝ բռնեմ՝ ասեմ՝ . դու կարաս իմ՝ դարդին՝ դարման՝ անի՝  
 էլ մարդ չէ՛ : Բերում՝ ա ըտենց էլ անում ա — իրանց քուչի  
 գրան կշտին մի քառասուն գազանոց ֆոր ա փորիլ ա տալի՝  
 երեսը հանց էլ ֆողով ծածկում՝ կօկկացնում՝ դգում՝ որ վրովը  
 անցկացողը ըսկի չէր ֆահմիլ թէ նրա տակը եքայ ֆոր ա քան-  
 դած :

Առաւօտը, դեռ լիս ու մութը չբաժանուած, էս մարդը վեր  
 ա կենում տենում՝ ֆորի միջիցը մի նուոցի ձէն ա գալի է-  
 թում ա ֆորի բերանը բաց անում, տենում քօռաղագընայ մի  
 դաւրիշ ա ընկէ մէջը :

— Աստու սիրուն, ասում ա դաւրիշը . մի ինձ ըստիան աղա-  
 տայ ինչ ուզես՝ կտամ . — թէ կնիկդ էրեխայ չի բերում՝ ընենց  
 կանեմ, որ էրեխայ բերի . թէ տանդ հիւանդ ունես՝ կլաւա-  
 ցնեմ . մախլաս, ինչ հունար ասես՝ ձեռիցս կգայ . . . .

— Զայթի ես հէնց քեզ ի ման գալի, դաւրիշ աղպէր, էգ լաւ  
 էլաւ : Էսքամ տարի մեռայ դեղ, դարման անելօն, սրբերի  
 դուռը մաշելօն՝ ճար, իլլաջ չէլաւ — կնիկս պտուղ չբերեց . որ  
 կարենաս ըտենց մի բան անի՝ դեռ հլա քեզ բօլ փող էլ կբաշ-  
 խեմ : Դաւրիշն հանում ա ֆորիցը տանում իրանց տունը :

Դաւրիշը մի խնձոր ա ուզում, կէս անում՝ տալի էն մարդին :

— Առ, ասում ա . խնձորի մի տապալը դու կուտես, մի տա-  
 պալը կտաս կնկանդ . վեց ամսէն վրա՝ կնիկդ մի տղայ կբերի :

Էն մարդը դաւրիշն բօլ փող բաշխեց՝ ճամփու գրեց : Աւրախ  
 ուրախ դեռ խնձորի մի տապալը ինքը կերաւ, կէսն էլ պահեց  
 որ կնկանը տայ . չունքի կնիկը տանը չէր՝ հարեւանի տունն էր  
 գնացէ : Շատ կացաւ, կացաւ՝ տեհաւ եգանում ա . ասեց — արի  
 էս մի տապալին էլ ես ուտեմ . ինչ պտի ըլնի . մին չի՝ — ես կե-  
 րած՝ կնիկս կերած : Վեր ա ունում՝ էն մի տապալին էլ ա ու-  
 տում :

Անց ա կենում մի ամիս, էրկու ամիս, մախլասի վեց ամիս՝  
 էս մարդը էրկրֆողսանում ա, աղատուում . բերում ա ըն էլ  
 ինչ — մի մօթալի տիկ : Հէնց աղատուելիս էլ՝ ինքը մեռնում ա :

Խեղճ կնիկը մնում ա միտք անելօն, թէ էս մօթալի տիկի մէ-  
 ջը ի՞նչ զօրութիւն պտի ըլնի, սր ո՞նչ բերան ունի, ո՞նչ սոտ, ո՞նչ  
 ձեռ . մախլաս ո՞նչ մի մարդի նշան չկայ վրէն : Վեր ա ունում էգ  
 տիկը տանում իրանց շիրախանում վէ դցում : ասում ա՝ տե-

նամ, բայի սրտ մէջը մի բան կայ. թող մնայ մի քանի շաբաթ էլ, տենանք ինչ կըլինի:

Մի շաբաթ անց կացաւ, էրկու շաբաթ՝ տեհաւ շիրախանում մինը իրան ձէն ա տալի:

— Ա՛ղի, ա՛ղի, արի՛ ըստէ՛ բան եմ ասում:

Մնում ա դարմացած, վեր ա կենում էթում տենում էն մօթալի օրին ա ձէն տուողը: Յիսուս Քրիստոս ա անում՝ մօտին կաննում:

— Ա՛ղի, ասում ա Մօթալը. էգուց կէթաս մեր թագաւորի կուշար, նրա աղջիկը կուզես ինձ. կասես — թագաւորն ասրած կենայ, իմ Մօթալ աղէն աղջկանդ ուզում ա:

— Ի՛նչ ես ասում, ա՛յ սրգի. գիժ ես խել ես, ի՛նչ ա. քեզ ո՛վ աղջիկ կտայ, ուզում ես իմ գլուխն էլ կտրիլ տաս, հենց էն ըլնի՞:

— Ա՛յ մէր, ես քեզ ասում եմ գնա՛ գնա՛. էգ քու բանը չի — կասն՝ չեն տայ:

Խեղճ կնիկը չի իմանում ինչ անի. ս՛նց էթայ թագաւորի աղջիկը ուղի Մօթալին: Համայ սր տենում ա Մօթալը շատ ա զօրում՝ վեր ա կենում էթում թագաւորի խնամաքարի վրա նստում: Թագաւորը դուս ա գալի՝ հարցնում.

— Ա՛յ մէրայ, խի՞ ես էկէ. ի՛նչ խնդիրք ունես ասելու:

— Թագաւորն ասրած կենայ, ինչ ասեմ. մի աղայ ունեմ, ինձ զօրով, գիւջով զրկել ա սր քու աղջիկը ուզեմ նրան: Ես հազար ասեցի թէ թագաւորը քեզ աղջիկ չի տայ՝ չլսեց. հմի էկել եմ սններդ եմ ընկէ, դու քու Աստօժ. ինչ ուզում ես, արա՛:

— Վ՛տամ, խի՞ չեմ տայ աղջիկս. համայ իրեք բան կ'ուզեմ, թէ աղէգ կարաց բերի՝ հօ աղջիկս իրանն ա ու իրանը. թէ չէ՛ էրկտիգ գլուխն էլ թագնիլ կ'տամ: Ես հետ կ'էթաս տղիդ կասես, թէ թագաւորն ուզում ա օխտը ընենց դել, սր համ քօս ըլնեն, համ քառ, համ լալ: Իմ ուղած իրեք բանից՝ մինն էս ա:

Խեղճ մէրը վեր ա կենում, գառը ախուր գալի տուն. հեննէն ճամփին տղին անըծում — Ժ՛նռ ու մ՛ռռ ըլնես, ասում ա, ա՛յ Մօթալ. սր ինձ ըսենց կրակի մէջ գցեցիր. հմի սրդիան պտի ճարենք օխտը էն թալուր դել, սր համ քառ ըլնեն, համ քօս, համ լալ:— Գալիս ա Մօթալին ասում թագաւորի ուղածը, Մօթալն ասում ա.

— Կ'էթաս գերեզմանատուներ. ֆլան մարմարէ քարին իրեք հետ մատդ կ'քսես՝ կ'ասես — Մօթալը քեզանից օխար դեւ ա ուզում, որ համ քառ ըլնեն, համ քօռ, համ լալ. էլ եդ կ'գաս:

Մէրը վեր ա կենում էթում գերեզմանատուներ, ման գալի էն մարմար քարը գտնում. մասը իրեք հետ քսում քարին՝ ասում — Մօթալը քեզանից օխար էն թալուր դեւ ա ուզում, որ համ քառ, համ լալ ըլնեն. — էլ եդ գալի տուն: Մօթալը հարցնում ա.

— Ա՛ղի, գնացիր. գտա՛ր մարմար քարը. ասե՛ցիր:

— Հա՛ն սո՛ր որդի. գտայ, ասեցի. համայ ըսկի բան չ'ասեց:

— Լա՛ն դնա՛. հմի դեւերը գնացած կըլնեն թագաւորի կուշտը. ասա՛ տենանք էլ ինչ ա ուզում:

Մէրը վեր ա կենում էթում թագաւորի խնամաքարի վրա նստում: Թագաւորը էն սհաթը դուս ա գալի.

— Հը՛, մէրայ. էս մինը աղէդ բերիլ տուեց. մնաց էրկուսը: — էս հետ էլ կ'էթաս աղիդ կասես, որ աղջկանս հմար մի ձեռք էն թալուր շոր կտրիլ տայ, որ սնչ մկրատ դիպած ըլնի, սնչ ասեղ, սնչ թեւ. ինքն էլ ալն ու մարգարաներով, բըռի-անդներով զարգարած. որ աղջիկս հագնի թէ չէ՛ դուզ վրէն գայ — սնչ աւել ըլնի, սնչ պակաս:

Մէրը վեր ա կենում գալի աղին ասում թագաւորի ուզածը: Մօթալը ասում ա.

— Գնա՛ էլ էն մարմար քարին իրեք գան մատդ քսա՛ իմ անումը տու. ասա՛ — Մօթալը քեզանից էն թալուր մի ձեռք աղջկայ շոր ա ուզում, որ վրէն սնչ մկրատ բանած ըլնի, սնչ ասեղ, սնչ թեւ:

Մէրը վեր ա կենում էթում, էն մարմար քարին իրեք հետ մասը քսում ա՛ ասում, — Մօթալը քեզանից մի ձեռք էն թալուր աղջկայ շոր ա ուզում, որ սնչ մկրատ դիպած ըլնի, սնչ թեւ, սնչ ասեղ. — էլ եդ գալի տուն: Մօթալը հարցնում ա.

(Շարունակելի)

Տ. Նաստարդեանց: